

ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇ

Շրջանակի մեջ վերցրու 1 – 10-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները:

1

Գտի՛ր այն թիվը, որը պարունակում է 5 հազարյակ, 4 տասնյակ և 7 միավոր:

- 1) 54070
- 2) 5407
- 3) 5047
- 4) 5470

2

Որքանո՞վ է յուրաքանչյուր կարգային միավոր փոքր իր հաջորդ կարգային միավորից:

- 1) 1-ով
- 2) 10-ով
- 3) 10 անգամ
- 4) 100 անգամ

3

Ինչպե՞ս կփոխվի երկու թվերի գումարը, եթե գումարելիներից մեկը մեծացնենք 13-ով:

- 1) կփոքրանա 13-ով
- 2) կմեծանա 26-ով
- 3) կմեծանա 13-ով
- 4) կմնա անփոփոխ

4

Ընտրի՛ր տրված թվանշաններից այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն. $3 կգ 40 գ > 3 կգ * 1գ$

- 1) 3
- 2) 4
- 3) 5
- 4) 6

5

Ընտրի՛ր այն շարքը, որտեղ թվերը դասավորված են աճման կարգով:

- 1) 4626, 5519, 74287, 64362
- 2) 4626, 5519, 64362, 74287
- 3) 74287, 64362, 4626, 5519
- 4) 74287, 64362, 5519, 4626

6

Երկու թվերի գումարը 435 է: Առաջին թիվը կազմում է գումարի $\frac{2}{5}$ մասը: Գտի՛ր երկրորդ թիվը:

- 1) 87
- 2) 174
- 3) 261
- 4) 348

7

Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 6 կմ 3 մ -ը մետրերով:

- 1) 603 մ
- 2) 6300 մ
- 3) 6030 մ
- 4) 6003 մ

8

Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 5 ր 42 վ-ը վայրկյաններով:

- 1) 542 վ
- 2) 292 վ
- 3) 342 վ
- 4) 162 վ

9

Ուղղանկյան երկարությունը հավասար է 27 սմ, իսկ լայնությունը՝ 18 սմ: Գտի՛ր ուղղանկյան մակերեսը:

- 1) 45 սմ²
- 2) 90 սմ²
- 3) 486 սմ²
- 4) 243 սմ²

10


Նշի՛ր այն գծապատկերը, որի $\frac{4}{9}$ մասը ներկված է:



1)



2)




3)



4)

11- 15-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրիր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում:

11 Թվային ճառագայթի վրա տրված են $A(5)$ և $A(14)$ կետերը: Գտի՛ր $A(5)$ կետի հեռավորությունը $A(14)$ կետից:



Պատ.՝

12 Հաշվի՛ր 8-ին բազմապատիկ բոլոր այն երկնիշ թվերի գումարը, որոնք բազմապատիկ են 12-ին:

Պատ.՝

13 Դի՛ր փակագծերն այնպես, որ ստացվի հավասարություն:
 $4500 : 350 - 40 \cdot 5 = 30$

14 Հաշվի՛ր $3255 : 15 + (9321 - 8272) \cdot 7$ արտահայտության արժեքը:

Պատ.՝

15 Կռահի՛ր օրինաչափությունը և տրված թվերից հետո ավելացրո՛ւ ևս մեկ թիվ:
 1, 4, 10, 19, ...

16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն ու հիմնավորված ներկայացրու առաջադրանքներից հետո նշված տեղում:

16 Գտի՛ր այն քառակուսու կողմի երկարությունը, որի պարագիծը հավասար է 4 սմ և 8 սմ կողմերով ուղղանկյան պարագծին:

Պատ.՝

17 A կայարանից միաժամանակ հակառակ ուղղություններով շարժվեցին երկու գնացք, որոնցից մեկի արագությունը 80 կմ/ժ էր, իսկ մյուսինը՝ 20 կմ/ժ-ով ավելի: Որքա՞ն կլինի գնացքների միջև եղած հեռավորությունը 5 ժամ անց:

Պատ.՝